ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և հանդիսապետությամբ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանի, հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար, ով սպանվել էր հունվարի 19-ին Ստամբուլում:

Մինչ արարողությունը ներկա հավատացյալներին խոսքով դիմեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Սրբազան Հայրն իր խոսքում կարևորեց Հրանտ Դինքի գործունեությունը և հրավիրեց համախումբ աղոթքի ննջեցյալի հոգու հանգստության համար:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ